

Հ. ՆԵՐՍԷՍ ՍԱՐԳՍԻՍՅԱՆԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԴԵՊԻ ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՀԱՅՔ

(1843 - 1853)

(Շար. «Բազմավեպ» 1973, ք. 1, էջ 87-106)

ՏՐԱՊԻԶՈՆ

1845 Յունուար 1ին մեր երկու ուղեւորները Տրապիզոն են. Զմիւռնիայէն ետք երկրորդ կայանը: Սարգիսեան հոն պիտի մնայ ամբողջ հինգ ամիսներ. քաղցր է իրեն համար ծննդավայրը, մանաւանդ չրջապատուած աղբականներէն ու սիրելիներէն. միւս կողմէ սակայն համամիտ չէ տեղացիներու մտածելակերպին ու զգացումներուն, որոնք հեռու են ճշմարիտ աղբասիրութենէն:

Տրապիզոն ծովեզերեայ քաղաք ըլլալով յառաջացած էր վաճառականութիւնը նաւերու երթեւեկութեամբ, ժողովուրդն առ հասարակ բարեկեցիկ էր. ասով հանդերձ չէին ըմբռնիր թէ անհրաժեշտ է վարժարան մը իրենց նոր սերունդին համար, ու թէեւ «երբեք երբեք արծարծի եռանդն ի ժողովրդեանն... սակայն ձեռնտուութիւն ուստեք չիք, եւ ինքեանք անփորձ տակաւին դրամ ծախելոյ ի կրթութիւն մանկտուն, չկարեն հազար ղուռչ հաւաքել ի տարւոյ ի վարձ տիրացուի ուրուք դաստիարակի»⁷³: Մարգիսեան Տրապիզոն չէր մը-

73. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 5 Մարտ 1845ին, առ Հ. Ռափայէլ Թրեանց, Վենետիկ: Նոյն շրջանին Տրապիզոնի մէջ ամէնէն աւելի կը փայլէր Պր. Կիւրեղ Սաղըրեան, հայրը՝ իդնատիոս Արքեպ. Կիւրեղեան Արքաւոր, որու մասին Սարգիսեան կու տայ հետեւեալ ծանօթութիւնը. «... Պր. Կիւրեղ մի եւեթ եղեալ քան ընչիւք... Սա այս այր թէպէտեւ անուսումն ոք է, այլ ներհուն կարեւորութեան դպրոցական կրթութեան եւ ապագայ արդեանց նորա քաջ հեռանա, սակայն նա ինքն միայնակ եւ չիք այլ ոք նմին ձեռնտու, այլ եւ ինքն

տած վարժարան հիմնելու համար, բայց տեսած էր անոր անհրաժեշտութիւնը, ու իր թախանձանքին վրայ է որ քանի մը տարի ետք, երկրորդ անգամ ըլլալով հիմ պիտի դուռի Միսիթ. վարժարանի մը: Տարածուած էր արդէն Ռափայէլեան վարժարանի համբաւը, և որովհետեւ Տրապիզոն «կրթութեան սով տիրեալ է», ու կրթութեան փափաքող մանուկները անթիւ էին, «գոհ առնել զամենեսին՝ գթութիւն մեծ է», ուստի կը հաւաքէ քանի մը պատանիներ «ընտիր... եւ աշխոյժք, բարեսիրտք եւ հնազանդք», որպէսզի Հ. Գրիգորի հետ զրկէ Վենետիկի Ռափայէլեան վարժարանը: Սարգիսեանի համար այդ առաջին աշակերտներէն կախում ունէր Տրապիզոնի կրթական մակարդակին ապագայ զարկը, անոնք էին որ դառնալով հայրենիք պիտի աշխատէին բանալ վարժարան, օգտակար ըլլալով իրենց քաղաքին. ուստի դրեթէ աղաչելով կը խնդրէ Ռափայէլեան վարժարանի տեսուչ Հ. Ռափայէլ Թրեանցէ «առատաձեռնել ի սոսա զանդու աշխատանս ձեր, զի նախընծայ են սոքա ի քաղաքէս, եւ ակնկառոյց կան ամենեքին մեծաւ անձկանօք անսայթաք կրթութեամբ դարձի նոցա ի հայրենիս իւրեանց»⁷⁴:

Սարգիսեանի ծրագիրն էր Տրապիզոն մնալ նոյն տարւոյն ձմեռը, ու դարնան անցնելով ուսական սահմանը շարունակել իր ուղեւորութիւնը, ձեռագիրներու աշխատանքն ու տեղագրութիւնը. «յայտհետէ որ ի բուն Հայաստան մտանելոց եմ, յաւելում (ի տեղագրութեանս) եւ զսովորութիւնս եւ դրարս եւ ի բուսականացն ինչ ինչ... եւ զոր կարեմ զանց չառնեմ»⁷⁵: Սարգիսեան պատրաստ է հետիոտն կտրել լեռներն ու դաշտերը, առանց դիտնալու թէ քանի խոչընդոտներ կը սպասեն իրեն:

Հազիւ Տրապիզոն մտած, կը մշակէ ուղեւորութեան ընդարձակ ծրագիր մը՝ ուսական սահմաններէն ներս, ու ահա քանի մը օր ետք Տփլիսէն Տրապիզոն կը հասնին «եօթն քարուչինք տարազնաց եղեալ ի պետութենէ ուսաց», եւ իսկոյն կը տարածուի լուրը թէ «խստիւ արգելեալ է զի այսուհետեւ ի կաթոլիկ անուանեալ քահանայից ոք՝ որ չիցէ հպատակ ուսաց ի չխեսցէ քահանայութիւն առնել յերկրի նորա»⁷⁶: Յիշեալ եօթը վեղարաւորներու արտաքսուելու պատճառը այն էր որ վիճարանութեան մէջ էին Վրաստանի Շախուլ-

առանձին տկարանայ բան մի յառաջ տանել-չբաւեալ ծախուցն ծանրութեան» (Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Հ. Գ. Այվազովսկի, Վենետիկ):

74. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 5 Մարտ 1845ին, առ Հ. Ռափայէլ Թրեանց, Վենետիկ:

75. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Հ. Գաբրիէլ Այվազովսկի, Վենետիկ:

76. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 26 Փետր. 1845ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւզեան, Պոլիս:

եան հայ քահանային հետ, եւ որովհետեւ սա վերջինը ռուսական հպատակութեան տէր էր, յաջողած էր հեռացնել եւրոպացի կրօնաւորները⁷⁷:

Բայց այսքանով դեռ չէր վերջանար խնդիրը. Սարգիսեանի ուղեւորութեան գլխաւոր նպատակը դիտականն ու դրականը ըլլալով, ոչ մէկուն փափաք յայտնած էր վարելու քահանայական պաշտօնը, հովուել ժողովուրդը, ռուսի ռուս կառավարութեան խիստ վարձուքը պէտք չէր ոչ մէկ արդելք հանդիսանալ Սարգիսեանի ճամբուն: Եւ սակայն «ի սոցանէ (քարուչինաց) լուայ թէ հրամանաւ կուսակալին Տփլիսաց՝ լուր հասեալ է ի սահմանադրութիւն թէ երկու կրօնաւորք ի Վենետիկ, որ ի Զմիւռնիոյ եկաւորին այդր, արդելցի չմտանել ի ներքս»⁷⁸, մանաւանդ թէ վեղարաւորներու աքսորուելէն առաջ քաղաքապետէն պատուիրակութիւն մը կը հասնի իրենց, հարցընելով թէ երկու Մխիթարեաններ «եթէ պահեալ էք ի վանս ձեր, յայտնեցէք, զի հրաման է հանել զնոսա ի սահմանաց մերոց»⁷⁹:

Հակառակ որ Սարգիսեան ջանացած էր ծածուկ պահել իր ճամբորդ ըլլալը, ինչպէս նաեւ ուղեւորութեան նպատակը, ու նոյնը յանձնարարած էր իր մերձաւորներուն ու ծանօթներուն, սակայն 1845 Յունուար 31 թուակիր նամակով կը դրէր Թիֆլիս բնակող ռուսահպատակ Հ. Սիմոն Ճուլարտեանի (Մխիթարեան) իր բոլոր պարագաներն ու դժուարութիւնները, որպէսզի անոր միջոցով յաջողի ձեռք ձգել ռուսական սահմանադրութիւնը անցնելու հրամանագիրը. «... աստ լուր լինի այժմ թէ տէրութիւնդ խստիւ պատուիրեալ է չմտանել ուղղափառ քահանայի ուրուք ի սահմանս իւր... նմին իրի խնդրեմ ծանուցանել մեզ եթէ որով ճանապարհաւ մարթիցիմք անցանել այդր, արդեօք հրամանաւ կուսակալին Տփլիսու, եթէ դեսպանին Պօլսոյ, կամ թէ վկայելով ռուս քօնսօլի տեղւոյս (Տրապիզոնի)՝ զայս եւս դիտեա՛ զի ի փաստութեան մեր զաղղիացւոց հպատակ դրեալ եմք զմեզ, թէպէտեւ վենետիկեան հայ քահանայ»⁸⁰:

77. Սարգիսեան բարեկամանալով եօթը վեղարաւորներուն հետ, կ'իմանայ անոնցմէ վտարուելու պատճառը. «Որ ինչ պատմի ի քարուչինաց չէ օտար ի ճշմարտութենէն, զի պատուիրեալ է նոցա պետութիւնն նախ մի՛ ամենեւին թղթել ընդ Իտալիոյ, երկրորդ ռուսաց հպատակ դրել զանձինս, երրորդ, որ մեծն է, եթէ զաղտնի ապստամբութիւն դիտիցեն զուսմեքէ ի խորհրդական խոստովանութենէ՝ աղդ առնել պետութեանն» (Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Արքահայրն Սուրբիս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ):

78. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 26 Փետր. 1845ին, առ Հ. Մինաս Բժշկեան, Խոիմ:

79. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 17 Մարտ 1845ին, առ Արքահայր Սուրբիս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

80. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 31 Յունուար 1845ին, առ Հ. Սիմոն Ճուլարտեան, Թիֆլիս:

Ուստի անկարելի չէ որ Հ. Սիմոն Ճուլարտեանի դիմումներուն վերայ տարածուած ըլլայ լուրը Սարգիսեանի փափաքին: Շախուլեան քահանան մղուած հակառակութեան հոգիէն «հնարեալ իցէ զմատնութիւնն, դուցէ այնպէս կարծեալ եթէ ի քարոզել երթամք եւ խառնիլ յիրս ժողովրդեանն եւ իշխել եւս ի վերայ նորա. կասկածանք զուր եւ տարապարտուց»⁸¹:

Հ. Ներսէս Սարգիսեանի ուրիշ բան չէր մնար եթէ ոչ բարեկամական ճամբով յաջողցնել հրամանագիրը: Նոյն օրերուն Խոիմ պիտի այցելէր Վորոնցով, որու անձնական բարեկամ էր Հ. Մինաս Բժշկեան Մխիթարեան վարդապետը. «գիտեմ զի բանք ձեր չանկանին ի դետին առաջի նորա. աղաչի վերապատուութիւնդ խնդրել ի նմանէ, մինչեւ մեկնեալ նորա ի կողմանցդ, կամ թէ ինքն դրեացէ առ կուսակալն Վրաստանի, զի անարգել լիցի ինձ միայնուս մտանել ի սահման ռուսաց, ոչ քարոզութեան աղաղաւ եւ ոչ խառնելոյ նել ի սահման ռուսաց, այլ ռուսումնական ուղեւորութեամբ շրջադայելոյ»⁸²:

Տեսնելով որ պիտի ուշանայ հրամանագիրը, Սարգիսեան չ'ուղեր ժամանակը սպասելով անցնել, մանաւանդ որ սկած էր դարձնել, ու «աս պատուական եղանակը, դիտես, ճամբորդներու սիրտը ինտոր կը վառեն Հայաստանի լեռներն ու դաշտերը օրերն անցընել»⁸³: Գիտական արշաւն սկսելէ առաջ կ'ուղէ ապահով ըլլալ իրեն ուղեկից Հ. Գրիգորի մասին, որ նոյն տարւոյն Ապրիլ 9ին ճամբայ կ'ելլէր հինգ աշակերտներով դէպի Պոլիս ու անկից Վենետիկ: Բայց աւա՛ղ, որովհետեւ «մինչդեռ կաղմ եւ պատրաստ էր ամենայն ինչ եւ հրաման եւս լեալ էր ի փաշայէ վասն թէսկէրէիցն, ի նմին աւուր՝ այն ինչ պատրաստէին երթալ ի նաւ մանկունքն ընդ Հ. Գրիգորի, պատուիրակաւ առաքեաց փաշայն արդելու զմանկունսն, որոց հրաման տուեալ էր ի նախընթաց աւուր»⁸⁴. փաշան մեկնելու հրամանը տուած էր՝ կարծելով թէ մանուկները իրենց կրթութիւնը պիտի ստանան Պոլիս, բայց երբ ականջին կը հասնի թէ պիտի անցնին Եւրոպա՝ իսկոյն կ'արգելէ. նաւը կը մեկնի «եւ դարձան այր իւրաքանչիւր ի տունս իւրեանց ամօթով»⁸⁵:

Հ. Գրիգորի դործին անյաջողութիւնը արգելք մըն է նաեւ Սարգիսեանի ծրագիրներուն, որ ի բնէ չէր կրնար իր մերձաւորը ձգել

81. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 26 Փետր. 1845ին, առ Հ. Մինաս Բժշկեան, Խոիմ:

82. Անդ:

83. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 10 Մայիս 1845ին, առ Պետրոս Ալլահվերտեան, Կարին:

84. Սարգիսեան Հ. Ն. Տրապիզոնէն, 16 Ապրիլ 1845ին, առ Հ. Գէորգ Հիւրմուզեան, Պոլիս:

85. Անդ:

լի, բայց միանգամայն սիրտը դառնութեամբ լեցուած թէ ինչո՞ւ ասանկ հրաշալիքը այսպիսի աշխարհաւեր աշխարհակործան աղբի մը ձեռք է անցեր՝ անէծքով նղովքով ետ կը դառնայ: Վասնզի բաւական չէ որ ժամերուն մէջտեղը ճամբի են դարձուցեր, այլ քովի մատուռները կամ կողմնակի աւանդատունները որը ախոռ ըրեր որն ալ արտաքինոց դարձուցեր են. ուլ գիտէ ան կողմերը հին ատեն ինչ չէն է եղեր, ինչ քաղքներ կայ եղեր որ ասանկ ժամեր շինելու արժանի են սեպեր, եւ այսօր անոնց չէ թէ աւերակը, այլ եւ ստուերն ալ չէ մնացած. մուրս ի վրան անանկ մքլած խելքերուն, որ ասանկ աշխարհաւեր աղբին թուրը զօրաւոր ըլլալու կը ցանկայ. խօսքս կտրեմ զէրէ քանի որ ըսեմ սիրտս կ'ելլէ»¹⁰⁰:

100. Սարգիսեան Հ. Ն. Կարինէն, 27 Յունիս 1845ին, առ Յովհաննէս Կիւրեղեան, Տրապիզոն: Ձենք կարծեր թէ աւելորդ ըլլայ հրատարակել երկրորդ փաստաթուղթ մը եւս, իշխան գիւղի նկատմամբ, որոնք կ'ամբողջացնեն վերեւ մէջ բերուածը. «Եւս աւուրք յառաջ շրջեցայ ընդ գաւառն թորթումայ եւ տեղագիծ արարի զվայրսն. սքանչելի էին երեք եկեղեցիքն զոր տեսի երկուք ի դաւառի անդ եւ երրորդն յիշխամ: Բազում ինչ ի լրոյ լուեալ այդք աւելագանցութիւն թուէր մեզ, դուցէ եւ ոմանց արհամարհելի թէ եւ յԱսիա դտանիցի՝ ճարտարապետութիւն. սակայն կայ եւ հիացուցանէ զտեսողսն. եկեղեցիքդ այդոքիկ բովանդակ քարակերտ շինուածովքն, անհղ բարձրութեամբ խաչաձեւ կամարացն եւ մանաւանդ միջին գմբէթացն հաստատելոց ի վերայ չորեցունց ստուար սեանց, փառահեղք են եւ վսեմք քան զոր մարթի ածել զմտաւ յԱսիա. հրաշալիք են եկեղեցիք յԵւրոպայ, այլ եւ սոքա ոչ ստորինք քան զնոսա. չեն ի քաղաքի ուրեք, այլ ի դուղնաքեայ գիւղորէս... ի փոքր խորանացն եւ յաւանդատանցն եւ շրջակայ մատրանցն ոմանք ի լուալիս կարգեալ եւ այլք ի գոմ անասնոց: Ընդ վսեմութիւն շինուածոցն յափշտակեալ ամենայն օտարականացն, անիծիւք եւ դառնութեամբ իրբեւ գիս մեկնին ի տեղեացն...: Աւուրս ոչ սակաւ անցուցի ի նոսա առնուլ զհաւասար արձանադրացն, որ էին ի լեզու վրաց հին տառիւք. ամենայն արձանադիր որ ի վէմս փորագրեալ էր անեղծ կային, սակաւ ուրեք խանդարեալ. եւ որ նկարածոյ էին մեծաւ մասամբ խանդարեալ, այլ եւ զամենայն մնացեալսն օրինակեցի եւ չթողի բառ մի եւ տառ որ թերակատար երեւէր յորմունսն նորա ի վերայ ծեփոցն, զի մի որ զօրինական պաշտամունսն դայցեն վճարել զաղթակողսցին կամ չըրտնուցուն ի պատկերացն, որովք նկարեալ են որմունքն ամենայն, փայտ բազում դիզեալ ի նոսա եւ հուրհարեալ եղծանեն զամենայն, եւ զայն չհամարեալ բաւական, մընովք եւ կացնովք զծեփս որմոցն ի վայր բերեն, ընդ որս եւ բազումք յարձանադրացն եղծանեն: Չայսոսիկ ինքեանք տաճկուք անամօթաբար պատմէին ինձ լուեալ աւանդութեամբ ի հաւուց իւրեանց, եւ պարծէին եւս թէ նախնիք նոցա առաքինացան յայս գործ կրօնի: Ի մէջ գմբէթիցն եւ մօտ ի կամարսն յորս չհասանէ ձեռն մարդոյ, կիսեղծ կան տակաւին պատկերքն, եւ շամշելոցն մտեալ երբեք երբեք ի ներքս բանս անպատկառս հայհոյութեամբ խօսէին զորոցն, եւ ակնարկի առնէին առ իս թէ եւ ես հաճիցի՞մ ընդ բանս նոցա. այլ եւս յընդօրինակութեան արձանադրացն պարապէիք: (Կարինէն, 9 Յունիս 1845ին, առ Հ. Ստեփան Եազըճեան, Փարիզ):

Այնքան խոր են Սարգիսեանի տպաւորութիւնները որ ամիս մը ետք դեռ թարմ զգացումներով պիտի գրէ. «հրաշալիք էին մեծահռչակ երեք եկեղեցիքն զոր տեսի... աւուրս ինչ անազանեալ ի նոսա օրինակեցի զամենայն արձանադիրս նորա մի առ մի»¹⁰¹:

Ա Ն Ի

Միշտ Կարինէն ոտքի կուտան ունենալով, Օգոստոս 19էն մինչեւ Հոկտեմբեր 30, կը դառնենք զինքը Անի քաղաքը ու մերձակայ սըրբատեղիները: Այդ երկու ամսուան ընթացքին, Օգոստոսի կիղիչ արեւուն տակ, անծառ ու անպատսպար աւերակներուն մէջ, «յառաւօտէ մինչեւ յերեկոյ զճակատն իմ դէմ արեւու արձանացուցեալ արեւակէզ տոյրէի, այլ Ո՛հ մի չարարի»¹⁰²: Հոն է որ կը շարադրէ տպագիր Տեղագրութեան 120 էջերը¹⁰³, ջանալով քար առ քար նկարագրել ինչ որ տեսած է, առանց խառնելու անոնց՝ սրտին անզուսպ զգացումները: Սակայն կարելի՞ է երեւակայել Սարգիսեան առանց խանդավառութեան, առանց յուզումի: Տպագիր Տեղագրութեան մէջ Անիի աւերակներու մասին խօսած պահուն ակամայ գրիչէն թռած է «... ուղեւորեալ եւ մերձ եղեալ ի պարիսպն՝ յայլ յայլմէ լինի ոգի հայրենասիրի»¹⁰⁴, մինչ նամակները որ դրած է նոյն վայրէն, ցոյց կու տան մեզի հնասէր ու հայրենասէր Սարգիսեանի հարազատ դիմանկարը, որ հեռու ամէն տեսակ հանգստութենէ, թափառական ու մանկարը, որ հեռու ամէն տեսակ հանգստութենէ, թափառական ու պանդուխտ կը շրջի օրեր ամբողջ գրիչը ձեռքին, «սովորեցի յաւուրս պահոց սոխով եւ հացիւ կերակրել»¹⁰⁵ ըսելով, պարզապէս ոչնչացումէ փրկելու համար՝ հայրենի սրբազան նշխարներ:

Շատ հաւանաբար Կարսի ճամբով մտած է Անի, նախ հանդիպելով Շիրակի սրբատեղիները, Տայլար, Պաշ Ծօրէկէլ, Խօշալանք, Ալաճա, Տիկոռ, Պէշքիլիսէ, եւ հուսկ Անի, ու այս ամէնուն տեղադրութիւնը աւարտելէ ետք է որ կ'անցնի նամակագրութեան, թուով չորս, որոնցմէ կը հրատարակենք որոշ հատուածներ, դոհունակութիւն տալու համար ընթերցողներու արդար հետաքրքրութեան:

101. Սարգիսեան Հ. Ն. Կարինէն, 9 Յունիս 1845ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւզեան, Պոլիս:

102. Սարգիսեան Հ. Ն. Կարինէն, 9 Յունիս 1845ին, առ Հ. Գրիգոր Ալեքսան, Վենետիկ:

103. Տեղագրութիւնք, էջ 100-220:

104. Տեղագրութիւնք, էջ 105:

105. Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 16 Հոկտ. 1845ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւզեան, Պոլիս:

Ա

ԱՆԻ. Մայր եկեղեցւոյ մատեալ տողեմ գգիրս
14 Հոկտ. 1845

Աստուածապատիւ Հոգեւոր Տէր

Որպէս իղձ լինէի յամաց հետէ՝ յաջողեցաւ ինձ անքոյթ ուղեւորութեամբ տեսանել զցանկալին Անի, աւուրս. բաղումս հանելով աստ: Որ միանգամայն ընդ վսեմութիւնս պարսպացն եւ աշտարակաց ի զնին կայ, հիանայ մեծապէս ընդ մեծագործութիւն նախնեաց եւ ընդ աստուածաշտութիւն նոցա, զի եւ նշանք կրօնասիրութեան նոցա խաչաքարք եւ հրաշարժ բանք լի են յարձանադիրս նորա: Հրաշակառոյց եկեղեցիք, թէպէտեւ թուով սակաւք, փայլեն ի ներքս անդ. արքունիք թաղաւորաց տակաւին յոտին կայ, իսկ տունք քաղաքին առհասարակ փլուցեալ եւ հաւասար հողոյ:

Մի առ մի ստորագրել զամենայն ի թղթի աստ չբաւեմ, զայդ առանձին դրուածովք ընդ այլոցն հասուցանեմ ի վանս: Իմ աստ աշխատութիւն է առնուլ զհաւասար ամենայն արձանագրացն եկեղեցեաց եւ պարսպացն, որ թէպէտեւ դժուարութիւն մեծ է եւ տառապանք անհնարին սակաւ բարձրութեան վայրացն, այլ զոմն դիտակաւ եւ զայլն սանդղով դիւրացուցանեմ, եւ չքաղում բնաւ բառ մի որչափ ինչ մնացեալ եմ ցարդ անեղծք եւ անկործանք. սանդղուս երկայնաձիգ ածեալ եմ աստ սայլիւ: Իմ առաջին եւ դիւաւոր վախճան այս լիցի ուղեւորութեանս. հաւաքել զամենայն դրուածս առ ի նախնեաց, եթէ ի մատենաս եւ եթէ յարձանս. թէպէտեւ զայդ չկարիցեմ անթերի ի դիւրիս հանել սակաւ անբաւութեանս, սակայն ոչ թերի գտայց անտի որ հնարաւորն է. այսօր աւուրք եօթն են զի յաւերակսն Անուոյ շրջագայիմ եւ հազիւ աւարտեցի զարձանագրութիւնսն հանդերձ այլովքն. սակայն ի Շիրակ դաւառիս Տաճկաստանի, որ է յայս կոյս Ախուրեան գետոյ՝ ոչ միայն Անի է տեսութեան արժանի, այլ եւ բազում այլ վանորայք եւ եկեղեցիք, յորս շրջեցայ աւուրս երեսուն եւ հինգ, հաւաքելով զամենայն արձանագրութիւնս նոցա, եւ եթէ յաջողեցի ինձ երբեմն մտանել եւ ի սահման Ռուսաց, որ յայնկոյս Ախուրեան գետոյ, ոչ է միւս կէս մասն Շիրակայ, չբաւէ ամիս մի եւ անդ աշխատիլ. եւ այդ Շիրակ դաւառ միայն, ո՞ւր թողումք զայլս: Զբազմութենէ վանորէից նախնեաց լուեալ էաք միայն ի դաւառին Վանայ, զՇիրակայ ո՞ւր լուեալ էր մեր. սակայն որ միանգամ շրջագայի ի Հայաստան, անբաւս լսէ եւ տեսանէ, յորոց յոյժ սակաւս լուեալ է ի մատենից նախնեաց, եւ այն մեծաւ

մասամբ անծանօթ վայրքն եւ անուանքն եւ շինողն եւ այլ հանդամանքն, եւ ստուգի այդ ամենայն յակնատեսէ:

Արդ դառնամ ի Կարս անցանել ի Մուշ...¹⁰⁶:

Բ

ՅԱՆԻ, եւ ի Հոռոմոսի վանսն, ի հանգստարանն թագաւորաց, առ սնարիւք շիրմի Աշոտոյ թագաւորին մատեալ տողեմ գգիրս ի 15 Հոկտ. 1845

Վերապատուեցելոյ Տեառն Հ. Ռափայէլ վարդապետի խնդալ

Աւուրք քառասուն են արդ յորս դեղերիմ ի Շիրակ դաւառիս յԱնի եւ ի շրջակայ վանորայս, պարսպեալ ի տեղագրութիւն վայրացն եւ յօրինակել զամենայն արձանագրութիւնս, յորոց ի յայտ եկին այլ եւ այլ անուանք մենաստանաց Բաղնայր, Արջոյ, Առիճ, Խժկաւէնք եւ այլք բազումք: Տիեզերահռչակն Անի թափուր եւ ամայի յամենայն վայելչութենէ, սակաւաթիւ եկեղեցեօք եւեթ եւ պարսպօքն եւ արքունեօք պարծի արդ. թէպէտեւ սակաւ են մնացորդք յոյժ քան զոր լսէաք, սակայն ի սակաւուց անտի դուշակի մեծագործութիւնն Բաղրատունեաց: Հոյակապ են եկեղեցիքն, ահեղ եւ զարմանալի պարիսպքն եւ աշտարակքն, հիանայ տեսանողն, եւ հայրենասիրին յուշ եղեալ իւրոց նախնեացն փառաւորութիւն, տըխուր դիմօք մեկնի ի վայրացն, ո՞ւր նախկին նորա պայծառութիւն ստորագրեալ ի նախնեաց, եւ որպիսի անչքութիւն եւ ամայութիւն յոր այժմս անկեալ դնի: Զիք ի նմա եւ ոչ մի տուն, այլ առ հասարակ քայքայեալ եւ հողոյ հաւասար, ամենայն ուրեք աւերակ շինուածոց եւ քարակոյտ անբաւ, հրաշակառոյց եկեղեցիքն, ոմն կիսափուլ, ի ներքոյ եւ արտաքոյ աւերակօք լի, եւ ոմն ի գոմս խաչանց եւ արջարոց կարգեալ ի խաչնարածաց քրդաց: Այլ մի՛ զամենայն պահանջեր յինէն յանցուկ ժամուս, այլով պատեհաւ լուիցես զամենայն, յորժամ ի մի ամփոփեալ յղեմ ի վանս, զի արդ անկերեւ եմ ինձ ամենայն վայրքն եւ տխուր տեսիլ գերեզմանիս Աշոտոյ արտասուս ցնդէ յաչացս. թող որ փոքր մի հեռանամ ի տխուր վայրացս յայլ գաւառ եւ մատեալ անկարեկիր սրտիս ստորագրեմ գամենայն, կամ գիտաւեալս ի մի ամփոփեմ:

Արդ ի Մուշ խորհիմ անցանել...¹⁰⁷:

106. Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 14 Հոկտ. 1845ին, առ Արարհայրն Սուրբիսս Արքեպ. Սոմալեան, Վենետիկ:

107. Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 15 Հոկտ. 1845ին, առ Հ. Ռափայէլ Թրեանց, Վենետիկ:

Գ

ԱՆԻ. յարգումի պալատն Բագրատունեաց նստեալ
ի գետնի յանկեան ուրեք տողեմ գգիրս
ի 16 Հոկտ. 1845

Սիրեցեալդ Հ. Գրիգոր

Գիտեմ զի երանի տաա ինձ թէ յԱնի դեղերեալ ցանկալի յիշատակօք նախնեացն պարապիմ. յարեունիս թաղաւորաց նստեալ կամ ի ժամուս, այլ փոխանակ փառահեղ սպասուցն՝ որովք ճոխացեալ էր, արդ արհաւիրք անկեալ են զնովաւ, աշտտեանքն եւ սմբատեանքն փառաւորագոյնքն ի թաղաւորս Բագրատունեաց յուշ լինին ինձ. ահեղ մեծագործութիւնք նոցա կանգուն կան տակաւին, եւ տեղի դերեմանի նոցա անյայտ, բաց ի միտն ի նոցանէ. չիք այլ ինչ տեսանելի ի պալատանս, բայց որմունք եւեթ եւ գետնափոր շտեմարանքն եւ պահարանք ընդ նովաւ, զարմանաչէնք եւ հոյակապք յոյժ: Այլ եկեղեցեացն այլատարազ ձեւ եւ փառահեղութիւն, եւ պարսպաց եւ աշտարակաց բերդին վսեմութիւն զանցանէ զամենեւորմբք, իսկ այլք ի շինուածոց առ հասարակ կործանեալ կան: Այլ զամենայն մնացորդս Անուոյ եւ այլոց վանօրէից ընթերցցիս յորժամ միախուռն յղեմ այդր հանդերձ ամենայն արձանագրութեամբքն: (...) ցանկաւ դիտել զտարազ ուղեւորութեանս. ոչ մի ինչ փոփոխութիւն արարեալ է իմ. չիք առ իս ոչ փոքրաւոր եւ ոչ ծառայ ոք, այլ միայնակ չոր դլուխ. հասեալ ի քաղաք ուրեք ընդ կարաւանի, ի ձեռն ծանօթից ազգայնոց խնդրեալ գտանեմ զայր մի որ քաջ ծանօթ իցէ երեւելի տեղեաց եւ հնութեանց դաւառին այնորիկ, եւ սակ արկեալ ընդ նմա զվարձս աւուրն վասն նորա եւ վասն ձիոյ, չրջիմ ընդ նմա միայնակ եւ ապա ի բաց արձակեմ. այսպէս արարի ի Կարին, ի Թորթում եւ աստ ի Շիրակ գաւառիս: Աստի ի Մուշ գնամ նոյնպէս ընդ կարաւանին ընդ ճանապարհ Կարնոյ, զի երկիւղալի են այլ ճանապարհքն եւ աւազակութիւն քրդաց անպակաս. ե՞րբ արդեօք աղատեսցի Հայաստան յարհաւրաց անտի, զի ծաներկիւղ լիցի եւ ինձ համարձակ չըրջել եւ ի դաւառսն Վանայ եւ Պայէզլիտոյ եւ այլոց...¹⁰⁸:

108. Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 16 Հոկտ. 1845ին, առ Հ. Գրիգոր Աւետոյն, Վենետիկ:

Գ

ԱՆԻ. քաղաւորին պալատը նստեր կը գրեմ քուղքս
16 Հոկտ. 1845

Ազնիւ քեռորդիս Յովհաննէս

Անին տեսնելու փափաքը դուցէ օտարազգիի մը համար այնչափ աղղեցութիւն չընէ, բայց հայրենասէրը անհնարին կը վառէ, Անիին հնութիւնները անանկ մարդուն ոչ միայն նիւթական տեսիլ մը կ'երեւան, այլ անոնց վրայ նայելով միտքը կու գայ այն մեծագործ Բագրատունեաց թաղաւորները, անոնց փառաւորութեան ժամանակը, եւ հիմակուան անշուք աւերակը եւ ողորմելի տեսարանը, աչքը արցունքով կը լեցնէ:

Թաղաւորաց պալատը նստեր կը դրեմ թուղթս, բայց պալատին միայն պատերը մնացեր են. դրան շրջանակին քարին վրայ փորած զարդերը միայն, եւ պալատան տակի զաթը եղած գետնափոր խուցերը կամ թէ ըսենք մահաչնները բովանդակը կամարակապ, ասոնք են աւանդութեամբ մնացեր ամէնուն բերանը թէ աս է արքունիքը: Իսկ փառաւոր ժամերուն չէնքերը, անոնց վսեմ ու ահեղ բարձրութիւնը եւ ճարտարագործ քարի վրայ փորագրուածները տեսնողին հառաչել մը կու տայ թէ այսպիսի չէնքը ինչու արժանի չեղաւ անկործան մնալու մինչեւ աշխրջիս վերջը: Սակայն կը տեսնես որ անհրաշալի եկեղեցիներուն մէջ մէկը միայն ամէն մասամբ անկործան է մնացեր, որուն զմբէթն է ընկեր, որուն կամարին մէկ մասն է փլեր, շատն ալ մէկ կողմը փլեր, որուն ալ խորանին տեղն է մնացեր. տներէն մէկ հատ մը չէ մնացեր, այլ բովանդակը կործաններ հիմունքը միայն դետնին երեսը կ'երեւան. բերդին պատերը եւ իրենց աշտարակները ասոնք ալ ուրիշ վսեմութիւն մը տուեր են քաղքին, բովանդակ քառակուսի դեղնագոյն քարերով շինած, տեղ տեղ ալ սեւ քարերով խաչեր ձեւացուցած: Ուր թողնենք ամէն եկեղեցիներուն եւ պարխապներուն վրայ արձանագրութիւններուն բազմութիւնը, որոնք ետքը երբ որ զրկեմ դուն ալ հավէտիդ կէօրէ աչքէ կ'անցընես հանդերձ մանրամասն ստորագրութեամբ:

Անանկ խղճալի տեսարան չի կրնար ըլլալ երբ որ բերդին դռներէն ներս կը մտնես, ու ան տիեզերահռչակ քաղքին փառաւորութիւնը անապատ աւերակ կը տեսնես: Հապա քովի ձորերուն եզերքները եղած անբաւ խանութները հիսապի չեն գար, բովանդակը քարաժայռի մէջ փորուած, մէջերը տօլապներ ձեւացուցած, դարազի տեղեր, տուփերու խորշեր, ինչպէս դեղավաճառի խանութները տեսեր ես: Բայց բովանդակը դատարկ, եւ ժամանակին երկարութեամբ, օղն

ու մրրիկը, հեղեղալից անձրեւները ատ խանութներու վաճառչ եւ բնական ձեւերը մաշեր հալեր են, ինչպէս օճառի վրայ զանազան փորուածներ ձեւացնես ու անձրեւի տակ դնես ինչ կ'ըլլայ, անանկ դարձեր են:

Աս մեծադործութեանց մէկն ալ գետնափոր ճամբան է, որ քաղաքին տակը զանազան առաջը կը բաժնըլին: Իսկ ան որ դուցէ լսեր ես թէ խանութներու մէջ եւ գետնի տակ եղած մահաէններուն մէջը մալերը տահա կեցեր են ու դպածիդ պէս մոխիր կը դառնան, ասոնք ամմէնը առասպել են:

Ահա սիրելի քեզի համառօտ պատմութիւնը Անի քաղաքի: Անի քաղաքը տեսնողը միայն անով չի կշտանար, հապա իրեն զաւառին մէջ եղած ամմէն վանքերուն, եկեղեցիներուն պէտք է այցելութիւն ընէ, որոնց ամմէն մէկը զատ զատ մեծադործութիւն կը բերէ Բաղրատունեաց, եւ ասոնց ամմէնուն ստորագրութիւնը, ինչպէս որ ըսի, ետքը կը տեսնես...¹⁰⁹:

Այսքան հրաշալի ու մանրակրկիտ նկարագրութիւններէ ետք, չենք ուզեր աւելցնել նոր խորհրդածութիւններ, այլ իւրաքանչիւր ընթերցողի կը թողունք ազատօրէն սաւառնիլ մինչեւ Անի, ու Սարգիսեանի հետ լալ ու ողբալ հայրենի աւերակներու վրայ...:

Նոյեմբեր ամսուն կը ձգէ Անին ու Կարսի ճամբով կը դառնայ Կարին¹¹⁰: Երկու տարի ետք, նամակի մը մէջ պիտի յիշէ թէ Կարսէն դառնալու ճամբու կէսին, Սօղանլը լեռներու վրայ քիչ մնայ որ սառի. յանկարծակի կը փչէ սաստիկ հովը, «ոտք իմ եւ ծունկը իմ այնպէս պաղեցան, մինչեւ ի քայլափոխ ոտիցս չզգայի բնաւ եթէ ոտք իմ հասին ի գետին թէ ոչ. դողայր եւ սիրտ իմ, եւ ժամէ ի ժամ սպասէի եթէ Սօղանլը դերեզման ինձ լինիցի, քանզի չկարծէի ողջ ժամանել ի դիւղն, որ երկու ժամաւ հեռի էր տակաւին, սակայն գթացան ինձ երկինք»¹¹¹:

Մ Ո Ւ Շ

1845 տարուան Դեկտեմբեր ամսուն Սարգիսեան կը մտնէ Մուշ, ուր պիտի մնայ շուրջ երկուք ու կէս տարի: Մուշը Սարգիսեանի

109. Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 16 Հոկտ. 1845ին, առ Յովհաննէս Կիրեղեան, Տրապիզոն:

110. Քի Կարս մնացի եօթնեակս ինչ ի խոստովանութիւն ժողովրդոց ի խնդրոյ Սելվեանին, զի չիք անդ այլ քահանայ, թէպէտեւ խնդրեալ են ի նմանէ զայլ ոք քահանայ մշտակայ անդ, եւ նա խոստացեալ է տալ անի ի Խորաշրոյ երէց մի: (Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 16 Հոկտ. 1845ին, առ Հ. Գ. Հիւրմիւզեան, Պոլիս):

111. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 1 Յունուար 1847ին, առ Հ. Ստեփան Եղաճեան, Վենետիկ:

համար կ'ըլլայ վայր մը անակնկալներու եւ յուսախաբութիւններու, տառապանքներու եւ մխիթարութիւններու: Այս ամէնուն գիտակից է ձեռագիրներու առաքեալը, ուստի անվախ ու անվեհեր կը մեկնի Կարինէն, ընկերակցութեամբ հասարակաց կառավարին. առանձին ճամբայ ելլելը խոհեմութիւն չէր. դեռ նոր աղատած էր մահէն ու ճամբաները լի էին աւաղակներով:

Դժուար չէ երեւակայել դէպի Մուշ ճամբուն ընթացքին Սարգիսեանի ունեցած խանդավառութիւնն ու յուզումը. Անին տեսնելէ ետք իր երկրորդ երազը Մուշն էր, ամէնքը վկայած էին թէ հոն է «չտեմարանն ձեռագրաց... ուր աշխատութիւն բազում է ի դաղափարել ձեռագիրս եւ զձմեռն անցուցանել անդ»¹¹²:

Կարինի մէջ Սարգիսեան վայրած էր կաթողիկէ առաջնորդ Գրպօ. Յովհաննէս Սելվեանի յատուկ սէրն ու դուրսդուրանքը: Այս վերջինս իր հեղինակութեամբ ու պատկառելի դիրքով մեծ ազդեցութիւն ունէր թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական ատեանին առջեւ. իր յանձնէր թէ՛ քաղաքական եւ թէ՛ եկեղեցական ատեանին առջեւ. իր յանձնարարական թուղթով է որ Սարգիսեան աղատ համարձակ չըջած նարարական թուղթով է որ Սարգիսեան աղատ համարձակ չըջած էր Շիրակի հնութիւնները¹¹³, ու հիմա նոյն անձին նամակով կը ներէ կայանայ Մուշի Ռէս Պօղոսին, որ սիրալիկ կերպով կ'ընդունի զինքը:

1846 տարուան ձմեռն ճիշտ կեդրոնն ենք, Փետրուար ամիս, «որ ի վեր է յոյժ քան զմեր մտածութիւն սառնամանիք կողմանցս»¹¹⁴: «որ ի վեր է յոյժ քան զմեր մտածութիւն սառնամանիք կողմանցս»¹¹⁴: Սարգիսեան Ռէս Պօղոսի ընկերակցութեամբ կը ներկայանայ Առաջնորդի վանք, ուր թէ՛ առաջնորդը եւ թէ՛ միւս բոլոր միաբանները սիրալիկ կերպով կ'ընդունին զինքը, «մինչեւ ասել ցիս թէ ամառ սիրալիկ կերպով կ'ընդունին զինքը, «մինչեւ ասել ցիս թէ ամառ սիրալիկ կերպով կ'ընդունին զինքը»¹¹⁵: Նոյն օրն իսկ աչքէ կ'անցընէ վանքին բոլոր ձեռագիրները, ընդ ամէնը թուով 150, որոցմէ 20ը իրենց նիւթի յոր ձեռագիրները, ընդ ամէնը թուով 150, որոցմէ 20ը իրենց նիւթի յոր նորութեամբ կը դրաւեն բանասէր հօր սիրտը: Սարգիսեան նախ կը փորձէ գնել, սակայն անկարելիին երկարած էր ձեռքը, որովհետեւ «հնար չիք ոչ միայն վաճառել զնոսին, այլ եւ ընդ դուռն մենաս»:

112. Սարգիսեան Հ. Ն. Կարինէն, 3 Յունիս 1845ին, առ Հ. Սիմոն Զուլարտեան, Թիֆլիս:

113. «Եւ ինձ յանձնարարական թուղթս առ կուսակալ պէյս դաւառին Շիրակայ, առ անքոյթ շրջադայիւր ինձ ամենայն ուրեք, եւ խնամ ունի այրն (Գերպ. Սելվեան) չառնել պակաս զայսպիսի ձեռնառութիւնս եւ յայլ քաղաքս յորս ծանօթք կան նորա ի պէյից» (Սարգիսեան Հ. Ն. Անիէն, 16 Հոկտ. 1845ին, առ Հ. Գ. Հիւրմիւզեան, Պոլիս):

114. Սարգիսեան Հ. Ն. Կարինէն, 23 Նոյեմբ. 1845ին, առ Հ. Գեորգ Հիւրմիւզեան, Պոլիս:

115. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 25 Փետր. 1846ին, առ Պետրոս Վրդ. Քիւլիւեցի, Կարին:

տանին արտաքս հանել»¹¹⁶։ Կը սպասէ օղերուն մեղմանալուն, որ-
պէսզի ամէն օր դայ եւ օրինակէ զանոնք մի առ մի. մինչ այս կը
չարադրէ ու կ'ամբողջացնէ Ծիրակ դաւառի ամբողջ տեղադրութիւ-
նը, որոնց ատաղձը բերած էր իր հետ Կարինէն¹¹⁷։

Մարտ ամսուն Սարգիսեան այցելութիւն մը կու տայ Մուշի եր-
կրորդ նշանաւոր Ս. Յովհաննէս վանքին, ուր նոյնպէս կը գտնէ սի-
րալիր ընդունելութիւն, մանաւանդ վանքի առաջնորդ Բարսեղ վար-
դապետէն ու անոր փոխանորդ Մարտիրոս վարդապետէ, ու կը ստա-
նայ հրաման ազատ համարձակ օրինակել փափաքած ձեռագիրները։
Սակայն նոյն վանքին մշակները, «չորս նոքա միաբանս կոչեն»¹¹⁸,
բիրտ կերպով վիճաբանութեան կը բռնուին առաջնորդին հետ, «թէ
դու ուզել ես, զիա՞րդ խղճես զմատեանս վանացն հանել արտաքս»¹¹⁹։
Վանահայրը ի դուր կը պաշտպանէ ինքզինքը, աղաղակելով թէ ձե-
ռագիրներ դուրս հանելու հրաման չէ տրուած, այլ միայն վանքին
պարիսպներէն ներս օրինակելու թոյլտուութիւն։ Տաք վիճաբանու-
թիւնը կ'աւարտի մշակներու յաղթանակով, որոնք կը պնդեն «չեւ
տեսեալ մեր զհրամանագիր Զաքարիա վարդապետէն՝ չթողումք»¹²⁰։
Մշակներու տմարդութիւնը արդիւնք էր մշեցի Տէր Յակոբ երէցին,
կաղ ոտքով, «որ զմիտս ռամիկ մարդկանն պաշարեալ է այնու զի
ասէ. զմեր մատեանս կողոպտեալ Փռանկացն՝ հանեն ի ձեռաց մե-
րոց զհաւատս մեր»¹²¹, առանց դիտնալու որ ճիշտ հայ հաւատքը
պահպանելու համար է որ Սարգիսեան զոհուած էր ու կը շարունա-
կէր զոհաբերուիլ իր ամբողջ անձով ու կարողութիւններով...

Այդ անախորժ տեսարանէն ետք ո՞վ կը համարձակէր դարձեալ
զարնել վանքին դուռը. Սարգիսեան կը ջանայ խաղաղեցնել զիրենք

116. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 9 Սեպտ. 1846ին, առ Հ. Գէորգ Հիւրմիւղեան,
Պոլիս։

117. Ուղեւորութեան ընթացքին դրած Տեղադրութիւնները, Սարգիսեան մաս առ
մաս կը զրկէր Վենետիկ. այսպէս նախ Զմիւռնիոյ տեղադրութիւնը, ապա
Զմիւռնիայէն Տրապիզոնի տեղադրութիւնը, որ Հ. Գրիգոր Տրապիզոնէն իր
հետ կը տանի Վենետիկ։ Տրապիզոնէն Անի եւ Մուշի տեղադրութիւնը, մշեցի
Ակօի ձեռքով, 1846ի Ապրիլին կը զրկէ Մուշէն Տրապիզոն, իրեն քեռորդի
Յովհաննէս Կիւրեղեանի, որու կ'ողջէ հետեւեալ տողերը. «Հախարհաբաղան
դրածնես... զուրթի մը մէջ ամփոփած եմ... զիտեմ որ զուրթին վրայ
կամ պիտի ծիծաղիս կամ զիս պիտի մեղադրես. բայց գիտնաս որ Մշու էն
վարպետ տիւրկէն է չիներ. տահա ինչեր աճապ պիտի տեսնենք»։ (3 Ապրիլ
1845)։

118. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 5 Ապրիլ 1846ին, առ Գերպ. Յովհ. Սելվեան,
Կարին։

119. Անդ։

120. Անդ։

121. Անդ։

լսելով. «որ ինչ չէ լինելոց սիրով՝ ինձ չէ պիտոյ», ու կը հեռա-
նայ, «ընդ որ խոր խոցեցաւ առաջնորդն»¹²²։ Քիչ առաջ Առաքելոց
վանքի վանահայրը այնքան լաւ տրամադրուած էր որ նոյն իսկ տրա-
մադիր էր Սարգիսեանի տալ ուզած ձեռագիրը, որ տանելով իր հետ՝
ազատօրէն օրինակէ ու դարձնէ վանք. սակայն ան ալ չըջապատ-
ուած էր պահակներէ, ու չէր կրնար ծածուկ դործել, որովհետեւ,
Սարգիսեանի վկայութեան համաձայն, Մուշ «քաղաք այնպիսի է,
յորում խորհրդական խոստովանութեան եւեթ է թաղուն մնալ, այ-
լում ամենայնի մինչ չեւ ընդ միտ ածեալ ումեք եւ ահա այլք եկեալ
առաջի, եւ պատմեն մի ըստ միով, զի միտս ներտրամադրեալ դա-
ղափարս ի հիացումն եւ յիմարութիւն լսողաց. զայս ոչ միայն փոր-
ձիւ տեսանեմ ի նոսա, այլ եւ նոքա համարձակ խոստովան լինին թէ
ի Մուշ չմարթի թաղուն մնալ խորհրդոյ իրեք»¹²³։

Մօտ է դարունը, կը հալի ձիւնը, կը ծաղկի նշենին, դուարթ է
բնութիւնը, միայն Սարգիսեանի հոգին է որ կը պատէ մթութիւնը.
ձեռագիրներու համար եկած էր Մուշ, սպասած էր հինգ երկար ա-
միսներ (Դեկտ.—Ապրիլ), յաջողած էր մտնել Առաքելոց վանքը միակ
այցելութեան մը համար։ Բայց որպէսզի կատարեալ ըլլայ մեր նա-
հատակին մարտիրոսութիւնը, պատուիրակութիւն մը կը հասնի ի-
րեն Առաքելոց վանքէն, լսելով թէ «մի՛ եկեսցես ի վանս մեր վասն
րեն Առաքելոց վանքէն, լսելով թէ «մի՛ եկեսցես ի վանս մեր վասն
զրչադրաց»¹²⁴, որովհետեւ քաղաքացիներէն ոմանք սպառնացած են
վանահօր լսելով. «եթէ թոյլ տացես նմա դալ նստել ի վանսդ եւ
առնուլ զօրինակս ի զրչադրաց, չընդունիմք զքեզ յառաջնորդութիւն
վանացդ»¹²⁵։ Ուրեմն Առաքելոց վանքէն ալ դադրած էր ամէն յոյս։
Սրտնեղութենէն չկարենալով մնալ Մուշ, կը քաշուի մերձակայ Նաք-
շէն գիւղը, որպէսզի հեռու մնալով վանքերէն՝ կարենայ խաղաղել
մթնոլորտը։ Նորչէն ծածկուած պիտի մնայ երեք ամիսներ, ու յոյ-

122. Անդ։ Սարգիսեան այս բոլորը կը մանրամասնէ Գերպ. Սելվեանի ուղղած նա-
մակին մէջ, խնդրելով իրմէ որ խօսի Կարին գտնուող Մուշի վանքերու ընդհ.
առաջնորդ Զաքարիա վրդ.ին հետ, որպէսզի սա վերջինս յանձնարարական
նամակ մը գրէ Մուշի վանքերու առաջնորդներուն եւ անոնց փոխանորդնե-
րուն, որպէսզի թոյլ տան ձեռագիրներ օրինակել, մանաւանդ որ Սարգիսեան
չէր ուզեր ունենալ ձեռագիրներու բնագիրները, «զի այսմ չիք յոյս ամենե-
ւին», այլ միայն ընդօրինակել։ Սարգիսեան անվերապահ կերպով դրած է
Կերպ. Սելվեանի, որովհետեւ վստահութիւն ունի «զի բան մի Զեր չանկանի
Գերպ. Սելվեանի առաջի առնն (Զաքարիա վրդ.ի)»։ (Մուշէն, 5 Ապրիլ 1846ին, առ
Գերպ. Յովհ. Սելվեան, Կարին)։

123. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 5 Ապրիլ 1846ին, առ Գերպ. Յովհ. Սելվեան,
Կարին։

124. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 29 Ապրիլ 1846ին, առ Գերպ. Յովհ. Սելվեան,
Կարին։

125. Անդ։

սով որ օր մը անպայման պիտի յաջողի ձեռագրերն օրինակելու գործը, հրաժարած ու մոռցած իր անձին ազնուութիւնը, անմիտութիւնը ու լռիկ «յախոռս ձիոց եւ ի մարագս կալայ բնակութիւն»¹²⁶:

Ամէն փորձ ու միջնորդութիւն ապարդիւն կ'անցնի, ու մինչ Ռէս Պօղոս իր հեղինակութեամբ կ'ուզէ յաջողցնել խնդիրը, Առաքելոց վանքի առաջնորդ Յովհաննէս վրդ. կ'իմացնէ թէ արգելքը ոչ թէ միայն տեղացիներէ է, այլ Պօլսոյ պատրիարքէն, որ լսելով Սարգիսեանի Մուշ գտնուիլը, թէ՛ Զաքարիա վրդ. ի եւ թէ՛ վանքերու առաջնորդներու հասցուցած էր իր նամակը, արգելելով ամէն աջակցութիւն: Ուստի անպտուղ կը մնան Գրպժ. Սելվեանի աղաչանքները Զաքարիա վրդ. ի առջեւ, որմէ կը լսէ նոյն ժխտական պատասխանը:

Կը զարմանայ ու կ'աւելի Սարգիսեան, որովհետեւ պատրիարքը «յորժամ առաջնորդ էր ի Զմիւռնիացւոց քաղաքին, մարդասէր էր առ իս յոյժ, առ որ ստէպ երթեւեկէի, եւ ոչ միայն յորդոր մատուցանէր ինձ մի՛ վեհերոտիլ ի ձեռնարկեալս գործոյ, այլ եւ ինքն իսկ ետ ինձ հինգ հատորս դրչադրաց. եւ այժմ չգիտեմ յորմէ հոգւոյ առաջնորդեալ առնէ զայս»¹²⁷:

Ուրիշ հնարք չէր մնար եթէ ոչ ուղղակի դրել Պօլսոյ Մատթէոս Իգմիրեան պատրիարքին, առանց ակնարկելու դրուած արգելքին, այլ լոկ խնդրելով յանձնարարական թուղթ մը, որպէսզի վերցուի ամէն արգելք: Սարգիսեանի վերջին փորձն է, վերջին յոյսը, ուստի դրեթէ արցունքով կ'աղաչէ պատրիարքին դրելով. «Արդ ի Զեղ ապաստան եղեալ՝ նոստութիւնս խոնարհի, մաղթանօք դանձուկ սրտիս յանդիման առնէ Սրբութեանդ. ի ձեռս Զեր է մեղմել զխրատութիւն սոցա, եւ զիս մի ունայն արձակել եւ բեկեալ սրտիւ՝ յերկրէ աստի. բազումս վշտացայ եւ փառօք զվիշտսն պսակել՝ Զեր է իշխանութիւն. թող պարծեցայց յաւիտեան եւ պարծեսցի Միաբանութիւնս մեր եթէ Զեր են գլխովին արդիւնք յաջողութեանց՝ որչափ ինչ ի նախնեացն մատենադրութենէ հասցեն առ մեզ յերկրէս Տարօնոյ, ազնիւ եւ քաջակարգացեն զՍրբութիւն Զեր եւ ստոյգ ուսումնասէր եւ ճշմարիտ աղգասէր ամենեքեանք՝ որ ընթեռնուն դանուն Զեր փառօք յիշատակեալ ի մատեանս, թէ որչափ ձեռն ետուր յերեւան զալոյ ի ձեռս ամենեցունց դրուածոց նախնեացն եւ ճոխանալոյ լեզուիս, Մխիթարեանս ուխտ արդ ի Զեղ ակնկառոյց եղեալ սպասէ երբ առնիջիք նմա զնորհս զայս մեծ: Հապա խնայեսջիք յիս

126. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 27 Սեպտ. 1846ին, առ Հ. Ռափայէլ Թրեանց, Վենետիկ:

127. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 16 Մայիս 1846ին, առ Գերպ. Յովհ. Սելվեան, Կարին:

աղաչեմ որ զիմ կեանս մաշեմ ի պանդուխտ երկրիս, ոչ յանձին ինչ օգուտ՝ այլ ի փառս աղբիս...»¹²⁸:

Եթէ Սարգիսեան այցելած ու տեսած չլլար Առաքելոց վանքի ձեռագրերն, վաղուց թողած կ'լլար ամէն բան ու կը շարունակէր ճամբան. «զինչ արարից, յետ միանգամ տեսանելոյ զմատեանսն որ նորագիտք են առ մեզ, չկարեմ մեկնել ի նոցանէ»¹²⁹, եւ «եթէ յուսահատելի բան էր՝ ինձ հարկ էր յուսահատել, որ ընդ գեղջական պանդխտութեանս յանձն առնում բազում անգամ զայնպիսի նուաստութիւն, զորմէ գրել ամաչեմ, այլ զինչ առնել իցէ, գիտ ցանկալի գրենոյն թէ որչափ ուրախացուցանելոց է միաբանութիւնս կալի գրենոյն թէ որչափ ուրախացուցանելոց է միաբանութիւնս ստիպէ զիս տանել երկայնատուքեամբ ամենայն չարակրօքեանց»¹³⁰:

Պատրիարքին դրուած նամակը Սարգիսեան կը դրկէ Պօլիս, իրեն միաբանակից Հ. Գէորգ Հիւրմուզեանի, խնդրելով որ անձամբ ներկայանայ ու յանձնէ պատրիարքին, որպէսզի անպայման դրական լլայ պատասխանը: Շատ հեշտ պիտի լլար եթէ ամէն բան զիւրաւ ընթանար. սակայն փակուած էր կարծէք Սարգիսեանի առջեւ յաջողութեան դուռը, ու դեռ պէտք էր անցնիլ ցաւի բովէն՝ բանալու համար այդ կնքուած դուռը:

Հոգեկան այս դժուարութիւններուն մէջ, ահա կը հասնի լուրը թէ Վենետիկի մէջ Սուրբաս Սոմալեան Արքահայրը, որ այնքան յոյսերով ու ակնկալութիւններով ճամբայ դրած էր Սարգիսեանը՝ յաւատարմութեամբ էր աչքերը երկրիս վրայ: Որ կ'լլայ Սարգիսեանի վիշտէն փակած էր աչքերը երկրիս վրայ: Որ կ'լլայ Սարգիսեանի վիշտէն, խոր՝ որովհետեւ կը սիրէր ու սիրուած էր փոխադարձ Արքատը, իսկ ինչպիսիք ու կը տառապէր պարզապէս դժգոհելու համար Արքահայրը, որ «յուսայր տեսանել յաւուր միում յաշխատումսն Արքահայրը, որ «յուսայր տեսանել յաւուր միում յաշխատումսն Արքահայրը, որ «յուսայր տեսանել յաւուր միում յաշխատումսն Արքահայրը»¹³¹: Հոգեկան այս միակութեան մէջ մոռցած իր վիշտը, կը ջանայ մխիթարել եղբայրակիցները գրելով. «Այս ցած իր վիշտը, կը ջանայ մխիթարել եղբայրակիցները գրելով. «Այս

128. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 16 Մայիս 1846ին, առ Մատթէոս պատրիարք Իգմիրեան, Պօլիս:

129. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 16 Մայիս 1846ին, առ Գերպ. Յովհ. Սելվեան, Կարին:

130. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 28 Մայիս 1846ին, առ Հ. Գէորգ Հիւրմուզեան, Պօլիս: Յաջորդաբար ուրիշ նամակի մը մէջ պիտի գրէ. «Բազում ինչ կայր տեսել աստանօր ի չարակրութեանցն, որոց տարայ եւ տանիմ ցարդ յանուայ մարդկանէն... լռեմ եւ տանիմ երկայնատութեամբ, եւ հարկ է այսպէս առնել ի սէր դրչադրացն» (Մուշէն, 27 Սեպտ. 1846ին, առ Արքահայր Գէորգ Հ. Հիւրմուզեան, Վենետիկ): Սարգիսեան նկարագրելով կրածները, կը գրէ Հ. Ռափայէլ Թրեանցի. «Կարծեմ զարմանաս եւ գովես եւս զիս թէ զիսրդ ապա համբերեմ. այլ եթէ գրչագրեք չկային աստ, ամենաքիմ էր քէ տակալ կահնայի» (27 Սեպտ. 1846):

131. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 28 Մայիս 1846ին, առ Հ. Գէորգ Հիւրմուզեան, Պօլիս:

դոյ ի նոյն յաւելում»¹⁴⁴, այնքան բուռն էր մէջը ձեռագիրներու հանդէպ սէրը¹⁴⁵: Սկզբնական շրջանին ամէն օր նորընտէրն կը յաճախէ Առաքելոց վանքը, որովհետեւ ձեռագիրները «տան ինձ մի առ մի, եւ ես քաղեմ ի նոցանէ զամենայն նորագիւտս եւ որք թերակատարք են առ մեզ, եւ յետոյ դարձուցեալ զայնոսիկ՝ զայլս առնում ի նոցանէ»¹⁴⁶. աւելի ուշ երբ կը շահի միաբաններու եւ առաջնորդին վստահութիւնը, թոյլ կու տան որ Սարգիսեան ազատօրէն հետը տանի ուղած ձեռագիրը, օրինակէ ու դարձնէ վանք¹⁴⁷, բացի համալուր Մշոյ հաստատիր ճառընտիրէն, որ նստած նոյն վանքը կ'օրինակէ դրեթէ ծայրէ ծայր¹⁴⁸:

«Աս տարի Հայաստանի աս կողմի ցուրտը խիստ սաստիկ եղաւ» կը գրէ Սարգիսեան¹⁴⁹, ու չկարենալով շրջագայիլ մօտակայ վայրերը՝ սկսած տեղագրութիւնը կատարելագործելու համար, դեռ աւելի բուռն կերպով կը նուիրուի ձեռագիր օրինակելու գործին¹⁵⁰: ձեռագիրներու սիրոյն համբերած էր ութը երկար ամիսներ, ու դեռ ներկայիս ալ կը շարունակէր համբերել, որովհետեւ «Մուշ խեղճութիւն է ամենայն ուրեք, երկիւղ եւ կասկած յաւազակաց եւ կարօտութիւն կարեւորացն մարդոյ՝ յանհարինս տառապեցուցանեն. բնակելոյ երկիր չէ եւ ոչ ամիս մի՝ եթէ չէին կաշկանդեալ զիս գրը-չագիրքն»¹⁵¹: Չափազանց նուիրումէն եւ քիչ ժամանակի մէջ շատ բան ընելու տենչէն միջոցով պիտի մոռնայ նոյն իսկ իր անձին հանդէպ հարկաւոր դարմանը, այնպէս որ աշխատանքի լծուելէն երկու

144. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Ապրիլ 1848ին, առ Արքահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

145. Ուրիշ անգամ Սարգիսեան գրած է. «Ես անդրադ եմ գտիւ եւ գգիշեր յընդօրինակութիւն դրչագրաց վանօրէից» (Մուշէն, 27 Սեպտ. 1846ին, առ Հ. Ռ. Թրեանց, Վենետիկ):

146. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 27 Սեպտ. 1846ին, առ Արքահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

147. «Թոյլ ետուն ինձ հանել զգրեանն ի վանաց եւ արտաքոյ օրինակել, ուր զառաջինն առ յուսահատութեան յանձն առեալ էի եւ ի վանսն նստել եւ օրինակել, առանց անելոյ զմտաւ զգիւտարութիւնսն» (Մուշէն, 18 Հոկտ. 1846ին, առ Տէր Պետրոս, Կարին):

148. «Ամիսս ինչ մնացի ի վանս Առաքելոց վասն ընդօրինակելոյ զմեծ ճառընտիրն, զոր չկամեցան հանել ի վանաց, որպէս զայլ գրեանս, զոր բերեալ ի նորընտէր օրինակեցի» (Մուշէն, 14 Յունուար 1848ին, առ Գեորգ Սեւրեան, Կարին):

149. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Յունուար 1847ին, առ Յովհաննէս Կիւրեղեան, Տրապիզոն:

150. «Ի խստութեան սառնամանեաց եղանակիս զուրկ ի զրօսանաց շրջակայ վայրացս գեղեցկութեան, նմին իրի եւ ի դէպ ժամանակ զիմ աշխատութիւնս հանել ի դուրս» (Մուշէն, 20 Յունուար 1847ին, առ Տէր Պետրոս, Կարին):

151. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 18 Հոկտ. 1846ին, առ Տէր Պետրոս Գիւլիւսեցի, Կարին:

ամիս ետք, ամբողջ նոյեմբեր ամիսը (1846) պիտի իյնայ անկողին ուժասպառ: Կեանքին ընթացքին առաջին անգամ չէր որ նման հիւանդութեան կը հանդիպէր, դիտէր նաեւ դարմանը. «Քանզի ոչ անփորձ էի թշուառական ախտին, սովով տանջեցի զնա եւ հալածեցաւ յետ լլկելոյ զիս ամիս մի»¹⁵²:

Տարի մը օրն ի բուն կ'օրինակէ Առաքելոց վանքի ձեռագիրները. Սարգիսեան աչքի առջեւ ունենալով Վենետիկի մատենադարանի ձեռագիրները, անոնց համաձայն «չթողի գլուխ մի բանից որ պակասէրն առ մեզ»¹⁵³: Օրինակութիւններու շարքը կը սկսի Ուսպէլեանի Սիւնեաց պատմութեամբ, որովհետեւ պակասաւոր ու թերի էր Վենետիկի դրչագիրը. ապա Եւագրի երեք դիրքերը «յընտիր օրինակէ»: Հուսկ կ'անցնի Գրիգոր Աստուածաբանի ճառերուն, որու կը յաջորդէ օրօրնակութիւնը «ի մեծ եւ յաշխարհածանօթ երկաթագիր ճառընտրէ»¹⁵⁴, որոնցմէ մաս մը նորագիւտ էին եւ ուրիշ մաս մը պիտի ծառայէին ստուգելու Վենետիկի կիսատ օրինակները: Ընդօրինակութեան գործը աւարտելուն, մեծագիր էջերով 42 տետրակ կը ղրկէ Ս. Ղազար, որոնցմէ «20 տետր դրեալ ընտրանաւ յերկաթագիր մեծ ճառընտրէն, 14 տետր հաւաքումն բանից նախնեաց, 3 տետր Եւագրի եւ 5 տետր Պատմութիւն Սիւնեաց»¹⁵⁵:

Նոյն տարիներուն Վենետիկի մէջ սկսած էին պատրաստել հայերէն Առձեռն բառարանի երկրորդ տպագրութիւնը, ուստի ամէն միաբան իր կարելին կ'ընէր նոր բառեր հաւաքելով ճոխացնել բառարանը: Հ. Անանիա ձէլալեան Պոլիսէն կը գրէ Սարգիսեանի. «Երբ չեցուցանել կամ է ինձ զի առաւել եւս փոյթ կալլիք պարապով ժողովել զանունսն ծառոց, ծաղկանց, կենդանեաց եւ ախտից նոցա, եւ դրառս եւ զառակաւոր խօսս ի ծերունեաց եւ ի պառաւանց, որք եւ դրառս եւ զառակաւոր խօսս ի ծերունեաց եւ ի պառաւանց, որք որպէս դիտէք կարեւորք են մեզ իրրեւ զնորագիւտ բառս ամբարեալս ի կենդանի մատենան»¹⁵⁶: ձէլալեանի յանձնարարութենէն շատ առաջ՝ Սարգիսեան արդէն իսկ հաւաքած էր զառաւական բոյսերու ուսմանները «հանդերձ բացատրութեամբ իւրաքանչիւրոց»¹⁵⁷ եւ ղըրկած Ս. Ղազար: Աւելի ուշ, 1848ին, Սարգիսեան Վենետիկ պիտի կրկէ տետրակ մը եւս, ուր ամփոփած էր բացի զառաւական բա-

152. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Յունուար 1847ին, առ Տէր Պետրոս Գիւլիւսեցի, Կարին:

153. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 1 Նոյեմբեր 1847ին, առ Հ. Ղ. Ալիշան, Վենետիկ:

154. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Ապրիլ 1847ին, առ Արքահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

155. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 12 Ապրիլ 1848ին, առ Արքահայրն Գէորգ Հիւրմիւզեան, Վենետիկ:

156. ձէլալեան Հ. Ա. Պոլիսէն, 8 փետր. 1847ին, առ Հ. Ն. Սարգիսեան, Մուշ:

157. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 13 Յուլիս 1847ին, առ Հ. Անանիա ձէլալեան, Պոլիս:

ներէն՝ «դեղջական երգս եւ բանս առաւելուորս», ինչպէս նաեւ զանազան տաղեր եւ պարերդներ, որոնց մասին «չատ աշխատեալ եւ չգտի համով բանս յերգս կաքաւուց», մանաւանդ որ դաւառարար-բառ սիրային երգերը անհասկնալի էին Սարգիսեանի, ու երբ հետամուտ կ'ըլլայ աւելի որոշ լսել արտասանուած բառերը «ոչ ոք իշխէ առ ամօթոյ անթերի արտասանել առաջի իմ»¹⁵⁸:

1847ի Օգոստոս ամսուն Սարգիսեան կ'աւարտէ ձեռագիր օրինակելու դործը, կը պատրաստուի ձգել Մուշը ու երթալ «յայլ աշխարհ, փոքր մի ոգի առնուլ եւ մարդ տեսանել, զի ընդ բարբարոսս եւ ես բարբարոսացայ»¹⁵⁹: Դիւրաւ մտած էր Մուշ, դժուարաւ պիտի ձգէր Մուշը, աղքատութիւնն ու համաճարակը պիտի կաշկանդէին ոտքերը 1847-1848ի ձմեռն ալ:

Տրապիզոնէն հետը բերած էր բաւարար դրամ, ոչ իր ապրուստին համար, որովհետեւ վարժած էր չարքաշ կեանքի, հացի ու սոխի, ախոռի ու մարագի¹⁶⁰. ունեցած դրամին մեծ մասը յատկացուցած էր ձեռագիրներ դնելու, միայն Մուշի մէջ դնած էր 27 արժէքաւոր ձեռագիր¹⁶¹, իսկ ուրիշ դումար մըն ալ Մուշի վանքերու մշակներուն «զոր նոքա միաբան կոչեն» բարի ձեռք տալով, որպէսզի ձեռագիրներ օրինակելու դործը խոչընդոտներու չհանդիպի. «վասն դրձագրացն յաջողելոյ միթէ թեթե՞ւ ինչ էր զոր ի վանօրայս ծախեցի»¹⁶²:

158. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 12 Ապրիլ 1848ին, առ Հ. Գարբիէլ Այվազովսկի, Վենետիկ:

159. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 13 Յուլիս 1847, առ Հ. Անանիա ձէլալեան, Պոլիս:

160. «Մի ոք կասկածեցէ թէ շոյլ ոք իցեմ ի ծախս, բազում անգամ ի կարեւորացն զրկեմ զիս, եւ մինչեւ ցայսօր ոչ փոքրաւոր մի կամ ծառայ կապեալ եմ առ իս, թէպէտեւ պարսաւիցիմ երբեմն յոմանց, այլ դամենայն ծառայութիւն անձամբ առնեմ, զի մի աւելորդ ծախիւք ծանրացայց Միաբանութեանս» (Մուշէն, 27 Սեպտ. 1846ին, առ Արքայապետ Հիւրմիւզեան, Վենետիկ): «Զրկեմ զիս ի կարեւորաց անձին զի ձեռագիրք յաջողեցնեմ ինձ» (Մուշէն, 20 Ապրիլ 1847, առ Հ. Սարգիս Թէոդորեան, Փարիզ):

161. Սուրբ Կարապետ վանքը Սարգիսեան կը հանդիպի Եւսեբիոսի Գրոնիկոնի հին ձեռագրի մը, մասամբ պակասաւոր: Եւ որովհետեւ Հ. Մկրտիչ Աւգերեանի հրատարակածն ալ պակասաւոր էր, ու թերի մասերը ամբողջացուցած էին Հերոնիմոսի եւ Սամուէլի գրութիւններով, Սարգիսեան կը գրէ Տրապիզոն Հ. Պետրոս Մինասեանի, խնդրելով որ քննէ տպագիրը ու նշանակէ տպագրութեան թերի մասերը, որպէսզի ամբողջացնէ գանոնը Ս. Կարապետի օրինակով: Զորս ամիս ետք, 1847 Յունուար 20ին, Սարգիսեան դարձեալ կը գրէ Հ. Պետրոսի, իմացնելով թէ այլեւս անհրաժեշտ չէ Եւսեբիոսի տպագրութեան մասին խնդրած ծանօթութիւնը, «զի զգրչադիր օրինակն առի ի տեսնէն, եւ փոխանակ խնդրէ յինէն Լաստիվերոցի մի նորատիպ. եթէ չգտանի այդ մատենս, տուր վաղվաղակի բերել ի Պօլսոյ, ընդ նմին երկու փոքր եղիչէն»:

162. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Ապրիլ 1847ին, առ Հ. Սարգիս Թէոդորեան, Փարիզ:

Առանց քսակի ի՞նչպէս շարունակել ճամբան: Հանդուցեալ Սուրբիաս Սոմալեան Արքահայրը խոստացած էր տարեկան հազար ֆիւրին. սակայն նոյն տարիներուն աւստրիական պատերազմը վրայ հասնելով՝ Միաբանութիւնը մատնուած էր տնտեսական տագնապի, ու չէր կրնար կատարել իր խոստումը: Սարգիսեան կը մտածէ գրել ուղղակի Պոլիս, Միաբանութեան մեծ բարերար վառօդապետ Յովհաննէս Ամիրայ Տատեանի, պարզելու անոր իր վիճակը, միաժամանակ խնդրելով յանձնարարական կնքուած նամակ մը, «զի ուր եւ պէտք լինիցին ինձ դրամոյ՝ ծանօթ եւ հաւատարիմ ցուցայց թղթով Զերով»¹⁶³: Դժբախտաբար 1847 Ապրիլ ամսուն դրուած նամակին արդիւնքը պիտի տեսնէր տարի մը ետք, 1848ի Մայիսին. Տատեան բացակայ էր Պոլիսէն ու կը գտնուէր Եւրոպա¹⁶⁴:

Այս դժուարին կացութեան մէջ վրայ կը հասնի արեւելեան համաճառակ ախորը, որ քիչ ժամանակի մէջ մեծամեծ աւերներ կը դործէ Թիֆլիս, Երեւան, Ամիթ, Խարբերդ, Վան ու Բասեն, այնպէս որ Սարգիսեան ոչ իսկ ժամանակ կ'ունենայ փախչելու: Մուշի մէջ նուազագոյն էր վտանգը, բայց ո՞վ կարող էր ապահով զգալ ինքզինքը սպառնացած վտանգէն: Քաղաքներն ու գիւղերը կը դատարկանան. ապահով վայրերը լեռներն էին, «Եւ ես, կը գրէ Սարգիս-

163. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 20 Ապրիլ 1847ին, առ Յովհաննէս Ամիրա Տատեան, Պոլիս:

164. 1847 Ապրիլ 14ին Յովհաննէս Ամիրա Տատեան Պոլիսէն կը հասնի Վենետիկ, ու ամբողջ օրը կ'անցընէ Ս. Ղազար. Համբարձման օրը ներկայ կ'ըլլայ Գերպ. Գէորգ Հիւրմիւզեան Արքայապետ մատուցած ձայնաւոր պատարագին եւ երեք արեղաներու ձեռնադրութեան արարողութեան: Ապա ուղեւորութիւնը շարունակելով դէպի Փարիզ, Մուրատեան վարժարան կը ձգէ իր երկու գաւակները, որոնցմէ երէցը «Յարութիւն Գարեգինը Էֆօլ սամղրայ լապտաղուարի մէջ պիտի աշխատի եւ երեկոները պիտի դայ դպրոցը պառկելու, Գրիգոր Միհրանը ի կարգ աշակերտաց ընդունուեցաւ» (Տատեան Փարիզէն, 21 Յունիս 1847ին, առ Հիւրմիւզեան Արքայ, Վենետիկ): Ապա Տատեան կ'անցնի Լոնտոն: Հիւրմիւզեան Արքայ իմանալով որ Սարգիսեանի առ Տատեան ուղղած նամակը հասած է Պոլիս, կը յանձնարարէ պոլսաբնակ Հ. Բարսեղ Մարութ-րոսեանի, Սարգիսեանի նամակը փութով հասցնել Փարիզ, որպէսզի անկէ ալ զրկուի Լոնտոն, Տատեանի, «զի մի խափանեցի բազմախատ վաստակաւորն ի պիտանի եւ յօգտակար դործոյն» (2 Յունիս 1847): Հ. Սարգիս Թէոդորեան Փարիզէն Սարգիսեանի նամակը կը հասցնէ Տատեանի ձեռքը, ու Պելճիբայէն կը ստանայ պատասխանը թէ Լոնտոնէն դարձին միայն պիտի կարենայ տալ յանձնարարական նամակին հետ կու տայ չօշափելի գումար մը Սարգիսեանի ուղեւորութեան յաջողութեան համար. «ունիք առ մեզ վեց հազար դահեկանս շնորհեալս ի Տատեան Յովհաննէս Ամիրայէ, ի ծախս ճանապարհորդութեան ձերոյ յարեւելս վասն առաջիկայ ամիս» (Հ. Անանիա ձէլալեան Պոլիսէն, 16 Դեկտ. 1847ին, առ Հ. Ն. Սարգիսեան): Այս նամակը Սարգիսեանի ձեռքը պիտի հասնի 1848 Մայիս ամսուն, Բաղէշի մէջ:

եան, զոգի ի բռին առեալ լեռնէ ի լեռն, վանաց ի վանս իրրեւ փախըստական ոք յաւազակաց՝ դադար ուրեք խնդրէի ուր չհասանիցէ ախտն. վայ եկն ի գլուխս եւ հալեցայ մաշեցայ. թէպէտ կայ ամենեցուն միանգամ մեռանել, այլ ի պանդխտութեան ամենայն հանգամանք մահուան դառնանան յոյժ... Հարակրութիւն չատ կրեցի եւ կրեցից այլ եւս բազում»¹⁶⁵:

Հիւանդութենէ ազատ մնալու համար, որոշ չըջան մը Սարգիսեան կ'ապաստանի Առաքելոց վանքը. ճիշտ նոյն օրերուն Պոլսոյ կաթողիկէ պատրիարքը Գրգոճ. Անտոն Հասունեան Մուշ կը ղրկէր Սերորէ Վրդ. մը, քննելու համար տեղւոյ կացութիւնն ու քահանաներու միջեւ ծագած անհամաձայնութիւնը: Շատ չանցած Գրգոճ. Հասունէն կը հասնի ազգարարութեան նամակ մը, որու պիտի պատասխանէ Սարգիսեան 1848 Ապրիլ 12ին, ոչ թէ իբր յանցաւոր մը ինքզինքը պաշտպանելու համար, այլ տալու ինչ ինչ լուսաբանութիւններ՝ իբր անմեղ ամբաստանեալ մը: Ծանօթներ ու բարեկամներ կու գան կատակելով հարցնելու Սարգիսեանի «եթէ դայս ինչ եւ դայն ո՛ւր դործեալ է քո, եւ ե՞րբ եւ դիմ՞րդ, դի թաղուն մնայ առ ի մէջը. քանզի Տէր Սերորէ, ասեն, հարցանէ ցմեղ եթէ Հ. Ներսէս յեկեղեցիս հայոց փիլոնաւոր եւ վեղարաւոր կացեա՞լ իցէ, մատուցեա՞լ իցէ անդ պատարադ եւ խոստովանեա՞լ, եւ յեկեղեցիս ձեր քարոզ տուեա՞լ իցէ հակառակ եկեղեցւոյ վարդապետութեան... արդեօք Հ. Ներսէս յորդորեա՞լ իցէ դայս անխտիր լինել ընդ հայոց յիրս կրօնի եւ յաճախել յեկեղեցիս նոցա»: Կը զարմանայ ու կ'ալչի Սարգիսեան, թէ ի՞նչպէս այսքան զրպարտութիւն մէկ վայրկեանէն միւսը երեւան կ'ելլեն Մուշի նման քաղաքի մը մէջ, ուր «երեքօրեայ ճանապարհաց տարածութիւն է դաշտավայրիս, կ'ըսէ նոյն նամակին մէջ, եթէ դործ մի գործի թեթեւ եւ ոչ լսելոյ արժանի, միում աւուր ընդ ամենայն դաւառն հռչակի ի զարմացումն ամենեցուն»:

Հասած էր ժամանակը վերջնականապէս ձգելու Մուշը, ուր տառապած էր երկուքուկէս տարի (1845 Դեկտ. – 1848 Մայիս). նիւթական ու բարոյական զրկանքները մաշեցուցած էին զինքը մինչեւ ոսկրները:

Հ. ՍԱՀԱԿ ՃԵՄՃԵՄԵԱՆ

165. Սարգիսեան Հ. Ն. Մուշէն, 24 Յունուար 1848ին, առ Հ. Մովսէս Ամպէրպոյեան, Պոլիս: Ուրիշ նամակի մը մէջ Սարգիսեան կը գրէ. «Գիտես արդեօք զինչ տաղնապ էր զոր ի քօլէոայէ կրեցի աստ ի Մուշ եւ ի դաշտավայրն նորա մեծ տարածեցաւ առ հասարակ ախտն, ընդ բնակչացն սասանութեան զարհուրեցայ եւ ես, եւ ի լերինսն Տօրոսի տեղի անքոյթ... փախուցեալ թաքչէի. թէպէտեւ խնայեաց ինձ Տէր, այլ մաշեցան ոսկերքս ի զարհուրանաց» (Մուշէն, 24 Մարտ 1848ին, առ Հ. Պ. Մինասեան, Տրապիզոն):

ԿԻՐԱԿՈՍ ԾԱՂԿՈՂ

Նոր Զուղայի Ամենափրկչի վանքին ձեռագրաց արժէքաւոր հաւաքման մէջ, անտարակոյս, կարեւոր հայերէն ձեռագիրներէն մէկն է թիւ 481 Աւետարանը իր հայ մանրանկարչական արուեստին հարազատ զմայլելի մանրանկարներով, դործ տաղանդաւոր Կիրակոս ծաղկող վարպետին:

Երեւանի Մատենադարանին գլուխ դործոց Հաղբատի Աւետարանին (1211էն) մանրանկարչութեան պէս Նոր Զուղայի վանքին հաւաքման թիւ 481ին մանրանկարներն ալ այս Աւետարանը կը դարձնեն ժ. Դարու հայ մանրանկարչութեան անուրանալի գլուխ դործոց մը: Երեք անգամ առիթ ունեցայ այս սքանչելի արուեստի դործը անձամբ եւ ի մօտոյ ուսումնասիրելու, եւ ա՛յլ աւելի հաստատուեցայ այն համոզմանս վրայ՝ որ դեռ 1937ի քննութեանս ատեն կազմած էի:

Ընդհանրապէս հայ մանրանկարչութեան մասին գրողներ, ըլլան հայ թէ օտար, ժ. Դ. դարով սկսուած կը նկատեն հայ մանրանկարչական արուեստին անկումը: Կան որ կը շեշտեն ասիկա, ըսելով որ Թորոս Տարօնեցի Մեծ Հայաստանի մէջ եւ Սարգիս Պիծակ Կիլիկիոյ մէջ վերջակէտ դրին հայ մանրանկարչութեան արուեստին զարգացման: Ասիկա ոչ միայն անընդունելի է իր անճշտութեամբ, այլ պարզապէս ցոյց կու տայ այն հարեւանցի մերձեցումը, որով «դատել» փորձուած է հայ մանրանկարչութիւնը ժ. Դ. դարուն եւ անկէ վերջ ալ: Ոչ միայն հայ մանրանկարչութեան տաղանդաւոր վարպետներ՝ հայկական արուեստով զմայլելի մանրանկարչական դործեր թողուցած են մեզի ժ. Դ. դարուն եւ անկէ վերջ, այլ բազմաթիւն եւ իրապէս կարեւոր հայ մանրանկարչութեան կեդրոններ աներեւակայելի քաջութեամբ, անտանելի պայմաններու տակ շարունակած են արտադրել մանրանկարչական ամենաբնորոք դործեր, օրինակ Խիզան, Աղթամար: Աներեւակայելի կերպով կղզիացած անկիւններու մէջ մանրանկարչական մեծարժէք եւ դրաւիչ դործեր յղացուած են, որուն օրինակ է մեր հոս ներկայացնելիք Կիրակոս ծաղկողի կամ մանրանկարչի դործը: